Շաբաթական ակնարկ 28.07.2025

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծություն՛ը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն:** Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում,** որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում:**

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **զուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը:** Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Շուկաները նախորդ շաբաթ՝ ամփոփ

Նախորդ շաբաթ ԱՄՆ բոլոր հիմնական ինդեքսները արձանագրեցին դրական եկամտաբերություն:



Պղնձի գները շարունակում են բարձրանալ:

Բիթքոյնի գինը երկրորդ շաբաթը անընդմեջ նվազում է:



Նախորդ շաբաթվա ընթացքում ԱՄՆ պարտատոմսերի շուկան արձանագրեց խառը արդյունքներ:

Նախորդ շաբաթվա ընթացքում S&P 500-ը աճեց 1.52 %-ով



Նախորդ շաբաթվա ընթացքում Nasdaq-ը աճեց 0.91 %-ով

Նախորդ շաբաթվա ընթացքում Dow Jones-ը աճեց 1.30 % -ով

Նախորդ շաբաթվա ընթացքում Russell 2000-ը աճեց 0.92 %-ով

Ինդեքսներ

Հիմնական բաժնետոմսային ինդեքսների դինամիկան նախորդ շաբաթ

- Նախորդ շաբաթ ԱՄՆ բոլոր հիմնական ինդեքսները արձանագրեցին դրական եկամտաբերություն, առաջատարը S&P500-ն էր:
- ԱՄՆ խոշորագույն ընկերությունները շաբաթն ավարտեցին դրական արդյունքներով, այդ ֆոնին որոշ փոքր ընկերությունների բաժնետոմսերը արձանագրեցին կտրուկ աճ:



Բաժնետոմսերի շուկա | SPX VIX | S&P 500

Այս գրաֆիկը ցույց է տալիս S&P 500 ինդեքսի (SPX) և VIX անկայունության ինդեքսի միջև հակադարձ կապը 2025 թվականի հուլիսի 24-25-ը ընկած ժամանակահատվածում: Երբ շուկան աճում է (SPX), անկայունությունը և վախը նվազում են (VIX-ը անկում է ապրում): Շուկայի մասնակիցները հնարավոր է, դրականորեն են արձագանքել կորպորատիվ բարձր եկամուտներիին:

Հինգշաբթին և ուրբաթը S&P 500-ի համար վերջին չորս տարիների ընթացքում ամենացածր միջակայքային տատանման օրերից էին: Goldman Sachs-ը նշել է, որ շուկայի ծավալները շարունակում են բավականին ակտիվ մնալ:



Բաժնետոմսերի շուկա| 2-րդ եռամսյակի հաշվետվություններ

Alphabet (GOOGL)-ը հայտնեց, որ երկրորդ եռամսյակի EPS-ը կազմել է 2.31 դոլար, որը տարեկան աճ է 22%-ով և բարձր է կանխատեսումից 7.5%-ով: Ընկերության հասույթը կազմել է 96.43 միլիարդ դոլար և նախորդ տարվա համեմատ բարձր է 14%-ով: Աճի շարժիչ ուժերն էին արհեստական բանականությունը և ամպային տեխնոլոգիաները Google Cloud-ից հասույթը տարեկան կտրվածքով աճել է 32%-ով կազմելով 13.6 միլիարդ դոլար, Google-ի և YouTube-ի ծառայությունները աճել են 12%-ով և հասել է 82.5 միլիարդ դոլարի: 2025 թվականի կապիտալ ծախսերը հասնում են 85 միլիարդ դոլարի, ամպային և տվյալների կենտրոնների աճին աջակցելու նպատակով:

Tesla (TSLA)-ի EPS-ը կազմել է 0.33 դոլար, որը նախորդ տարի կազմում էր 0.52 դոլար: Ընկերության հասույթը կազմել է 22.5 միլիարդ դոլար, որը մի փոքր գերազանցում է սպասումները: Ընկերության վրա ազդող գործոնները բազմաթիվ են՝ Robotaxi-ի մեկնարկը Օսթինում, էներգետիկ լուծումների հատվածի աճը (Megapack, Powerwall): Ընկերության գործադիր տնօրեն Իլոն Մասկը զգուշացնում է առաջիկա եռամսյակներում հնարավոր դժվարությունների մասին: Նախորդ շաբաթ ընկերության բաժնետոմսերը նվազեցին մոտ 4%-ով:

Բաժնետոմսերի շուկա| 2-րդ եռամսյակի հաշվետվություններ

Coca-Cola (KO)-ն երկրորդ եռամսյակում հայտնել է մեկ բաժնետոմսի դիմաց 0.87 դոլար շահույթի մասին, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 4%-ով ավելի է և գերազանցում է սպասումները: Ընկերության հասույթը կազմել է 12.5 միլիարդ դոլար, որը տարեկան 1%-ով ավելի է: Coca-Cola-ն բարձրացրել է իր տարեկան կանխատեսումը՝ պայմանավորված գների/համադրության ուժեղ ցուցանիշներով և ծախսերի նվազեցմամբ: Հաշվետվությունից հետո ընկերության բաժնետոմսերը մոտ 1% անկում են գրանցել:

T-Mobile (TMUS)-ի մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 14%-ով և գերազանցել է սպասումները 5.6%-ով կազմելով 2.84 դոլար, իսկ հասույթը տարեկան կտրվածքով աճել է 6.9%-ով և կազմել է 21.13 միլիարդ դոլար: Ընկերությունը բարձրացրել է իր տարեկան կանխատեսումը հղում անելով հետվճարային բաժանորդների ռեկորդային աճին և 5G ծառայությունների ոլորտում ուժեղ աճին: Հաշվետվությունից հետո ընկերության բաժնետոմսերը աճել են ավելի քան 7%-ով:



Պարտատոմսերի շուկա

Նախորդ շաբաթվա ընթացքում ԱՄՆ պարտատոմսերի շուկան արձանագրեց խառը արդյունքներ, 2 և 5 տարեկան պարտատոմսերի եկամտաբերությունը աճեց (գները նվազեցին), իսկ 7, 10 և 30 տարեկան պարտատոմսերը արձանագրեց բացասական եկամտաբերություն (գները բարձրացան):

Պարտատոմսերի շուկա | դոլարի ինդեքս | տոկոսադրույքի ակնկալվող նվազեցում

Նախորդ շաբաթ տոկոսադրույքի իջեցման սպասումները փոքր-ինչ նվազեցին:

Չնայած վերջին երկու օրերի ուժեղ աճին դոլարը շաբաթն ավարտեց անկումով, տարեսկզբից դոլարի ինդեքսը նվազել է մոտ 9%-ով:



Ոսկին շաբաթվա վերջին երեք օրերում արձանագրեց անկում՝ փորձարկելով իր 50DMA-ը (օրական սահող միջին):

Պղնձի գները շարունակում են բարձրանալ, որը պայմանավորված է բարձր պահանջարկով, մաքսատուրքերով և որոշ երկրների կաղմից արտահանման հնարավոր սահմանափակումներով: Պղնձի գինը տարեկան կտրվածքով աճել է ավելի քան 40%-ով:

Բիթքոյնի գինը երկրորդ շաբաթը անընդմեջ՝ անկում ապրեց հասնելով 115,000 դոլարի մակարդակին, որը երկշաբաթյա ամենացածր կետն է:



Հետաքրքիր փաստեր

ԱՄՆ-ում փոքր ֆերմերային տնտեսությունների սնանկացումները 2025 թվականի առաջին կեսին աճել են մինչև 173-ի, ինչը ամենաբարձր ցուցանիշն է 2020 թվականի համավարակից ի վեր: Սա 147%-ով ավելի, քան 2023 թվականի նույն ժամանակահատվածում: Սա տեղի է ունենում այն ժամանակ, երբ բարձր տոկոսադրույքները, առևտրային լարվածությունը և Չինաստանի պահանջարկի արագ անկումը կրճատել են շահույթը: Սոյայի, եգիպտացորենի և խոզի մսի արտադրողները ամենաշատն են տուժել, քանի որ Չինաստանը գնումները տեղափոխում է դեպի Բրազիլիա և Լատինական Ամերիկա: Միևնույն ժամանակ, ԱՄՆ-ում գյուղատնտեսական պարտքը, ըստ ԱՄՆ-ի գյուղատնտեսական դեպարտամենտի, կանխատեսվում է, որ այս տարի կհասնի ռեկորդային 561.8 միլիարդ դոլարի:



Հետաքրքիր փաստեր

ԱՄՆ-ում ավտովարկերի ուշացման մակարդակը շարունակում է աճել: Subprime ավտովարկերի ուշացման մակարդակը պատմության մեջ առաջին անգամ գերազանցել է 5%-ը: 2022 թվականից ի վեր subprime ավտովարկերի 60-օրյա ուշացման մակարդակը ավելի քան կրկնապատկվել է: Ժամկետանցության մակարդակը այժմ գերազանցում է 2008 և 2020 թվականներին գրանցված մակարդակները: Մինչդեռ առնվազն 90 օր ուշացման ժամկետ ունեցող ավտովարկերի բաժինը 2025 թվականի առաջին եռամսյակում հասել է 5%-ի, ինչը համապատասխանում է 2020 թվականի համավարակի ամենաբարձր ցուցանիշին: Ավտոմեքենաների շուկայի «փուչիկը» պայթում է:



Հետաքրքիր փաստեր

ԱՄՆ-ում առկա տների վաճառքը հունիսին ամսական կտրվածքով նվազել է 2.7%-ով՝ հասնելով 3.93 միլիոնի, ինչը ամենացածր ցուցանիշն է վերջին 9 ամիսների ընթացքում: Առկա տների վաճառքը այժմ մոտ է վերջին 15 տարվա ամենացածր մակարդակին: Համեմատության համար, համավարակից առաջ միջին ցուցանիշը մոտ 37%-ով ավելի բարձր էր: Սա տեղի է ունենում այն ժամանակ, երբ հիփոթեքային վարկերի բարձր տոկոսադրույքները տների վաճառքը պահում են ցածր մակարդակներում: Միևնույն ժամանակ, վաճառքի միջին գինը նախորդ ամիս աճել է 2%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, հասնելով ռեկորդային 435,300 դոլարի: Բնակարանային շուկան պատմականորեն մնում է անհասանելի:



Goldman-ը կանխատեսում է, որ չինական բաժնետոմսերը կբարձրանան 11%-ով՝ ԱՄՆ-ի հետ հնարավոր առևտրային գործարքի ֆոնին, ԱՄՆ-ն և Չինաստանը այսօր Ստոկհոլմում կվերսկսեն բանակցությունները:

ԱՄՆ-ի տնտեսական օրացույց

Այս շաբաթվա ընթացքում 386 ընկերություններ պատրաստվում են հրապարակել իրենց 2025 թվականի երկրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները: Այս շաբաթ շուկայի մասնակիցների կողմից առավել սպասված են՝ Microsoft Corporation (MSFT)-ի, Apple (AAPL)-ի, Amazon (AMZN)-ի, Meta Platforms (META)-ի, Visa (V)-ի և շատ ուրիշ ընկերությունների հաշվետվությունները:

#1 / 781 Total save as portfolio | create alert Refresh: 3min | off Page 1 / 40

No.	Ticker	Company	Sector	Industry	Country	Market Cap	P/E	Price	Change	Volume
1	MSFT	Microsoft Corporation	Technology	Software - Infrastructure	USA	3818.17B	39.70	513.71	0.55%	19,125,700
2	AAPL	Apple Inc	Technology	Consumer Electronics	USA	3194.47B	33.38	213.88	0.06%	40,268,780
3	AMZN	Amazon.com Inc	Consumer Cyclical	Internet Retail	USA	2457.05B	37.75	231.44	-0.34%	28,712,096
4	META	Meta Platforms Inc	Communication Services	Internet Content & Information	USA	1791.78B	27.80	712.68	-0.30%	8,271,698
5	V	Visa Inc	Financial	Credit Services	USA	692.36B	36.32	357.04	0.87%	3,915,781
6	MA	Mastercard Incorporated	Financial	Credit Services	USA	515.97B	39.86	568.22	0.84%	1,513,639
7	XOM	Exxon Mobil Corp	Energy	Oil & Gas Integrated	USA	475.78B	14.61	110.40	-0.35%	10,548,938
8	PG	Procter & Gamble Co	Consumer Defensive	Household & Personal Products	USA	371.14B	25.14	158.30	-0.32%	5,800,248
9	ABBV	Abbvie Inc	Healthcare	Drug Manufacturers - General	USA	336.11B	81.14	190.28	-0.29%	3,786,776
10	CVX	Chevron Corp	Energy	Oil & Gas Integrated	USA	317.02B	17.75	154.84	-0.64%	7,875,498
11	UNH	Unitedhealth Group Inc	Healthcare	Healthcare Plans	USA	254.96B	11.75	281.06	0.89%	16,486,616
12	HSBC	HSBC Holdings plc ADR	Financial	Banks - Diversified	United Kingdom	226.23B	12.02	64.92	-0.09%	1,305,168
13	AZN	Astrazeneca plc ADR	Healthcare	Drug Manufacturers - General	United Kingdom	225.34B	29.19	72.66	-1.38%	6,201,950
14	LIN	Linde Plc	Basic Materials	Specialty Chemicals	United Kingdom	222.60B	34.32	472.89	0.30%	1,212,138
15	MRK	Merck & Co Inc	Healthcare	Drug Manufacturers - General	USA	212.71B	12.33	84.71	0.71%	10,058,807
16	SHEL	Shell Plc ADR	Energy	Oil & Gas Integrated	United Kingdom	211.36B	16.65	71.99	-0.54%	2,571,836
17	BKNG	Booking Holdings Inc	Consumer Cyclical	Travel Services	USA	183.28B	35.04	5632.27	-0.31%	184,813
18	BA	Boeing Co	Industrials	Aerospace & Defense	USA	175.73B	-	233.06	0.77%	4,628,468
19	QCOM	Qualcomm, Inc	Technology	Semiconductors	USA	173.92B	16.13	158.40	-0.28%	4,808,242
20	ARM	Arm Holdings plc. ADR	Technology	Semiconductors	United Kingdom	172.47B	218.99	163.17	1.99%	3,151,871

Filters: earningsdate:thisweek export

Այս շաբաթվա ԱՄՆ տնտեսական օրացույցը

TIME (ET)	REPORT	PERIOD	ACTUAL	MEDIAN FORECAST	PREVIOUS
MONDAY, JULY 28					
	None scheduled				
TUESDAY, JULY 29					
8:30 am	Advanced U.S. trade balance in goods	June		--	-$96.6B
8:30 am	Advanced retail inventories	June		--	0.3%
8:30 am	Advanced wholesale inventories	June		--	-0.3%
9:00 am	S&P Case-Shiller home price index (20 cities)	May		--	3.4%
10:00 am	Consumer confidence	July		96.0	93.0
10:00 am	Job openings	June		7.4 million	7.8 million
WEDNESDAY, JULY 30					
8:15 am	ADP employment	July		82,000	-33,000
8:30 am	GDP	Q2		2.3%	-0.5%
10:00 am	Pending home sales	June		0.5%	1.8%
2:00 pm	FOMC interest-rate decision				
2:30 pm	Fed Chair Powell press conference				
THURSDAY, JULY 31					
8:30 am	Initial jobless claims	July 26		221,000	217,000
8:30 am	Employment cost index	Q2		0.8%	0.9%
8:30 am	Personal income	June		0.2%	-0.4%
8:30 am	Personal spending	June		0.4%	-0.1%
8:30 am	PCE index	June		0.3%	0.1%
8:30 am	PCE (year-over-year)			2.5%	2.3%
8:30 am	Core PCE index	June		0.3%	0.2%
8:30 am	Core PCE (year-over-year)			2.7%	2.7%
9:45 am	Chicago Business Barometer (PMI)	July		41.3	40.4
FRIDAY, AUG 1.					
8:30 am	U.S. employment report	July		102,000	147,000
8:30 am	U.S. unemployment rate	July		4.2%	4.1%
8:30 am	U.S. hourly wages	July		0.3%	0.2%
8:30 am	Hourly wages year over year			3.8%	3.7%
9:45 am	S&P final U.S. manufacturing PMI	July		--	49.5
10:00 am	ISM manufacturing	July		49.5%	49.0%
10:00 am	Construction spending	June		0.1%	-0.3%
10:00 am	Consumer sentiment (final)	July		61.9	61.8
TBA	Auto sales	July		--	15.3 million

060 408 005, 060 408 002, 010 592 301
Երևան, Բուզանդ 87, 85 գրասենյակ
brokerage@araratbank.am